ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ծառայությունների վճարովի մատուցման մասին

ք. Երևան «____» _____ 2012թ.

«Ա.Բ.Պ.» ՍՊԸ-ն, հետագայում «Կատարող», ի դեմս տնօրեն Հովհաննես Մարգարյանի, որը գործում է ըստ գործող Կանոնադրության, մի կողմից, և _____ (ա.ա.հ., անձնագրի համար, սերիա, տրման ամսաթիվ, վայր, սոց. քարտ), հետագայում «Պատվիրատու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

I. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել ծառայությունները (տես հավելված թիվ 1), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Ծառայությունների մատուցման ժամկետն է «___» _____ 2012թ. մինչև «___» _____ 2012թ.:

1.3. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կողմից ընդունման-հանձնման ակտի ստորագրման պահից:

II. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

ա) ծառայություններ մատուցել պատշաճ որակով,

բ) պատվիրատուի պահանջով մեկ օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:

գ) անձամբ կատարել ծառայությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է ծառայությունները վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան, ծառայությունների հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից երեք բանկային օրվա ընթացքում:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

ա) ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի ծառայությունների ընթացքը և որակը առանց միջամտելու նրա գործունեությանը,

բ) մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը

համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված ծառայությունների չափին:

III. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է ծառայությունները հանձնելուց հետո անմիջապես _____ օրվա ընթացքում:

IV. Այլ պայմաններ

4.1. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

4.2. Կողմերի հասցեներն ու վավերապայմանները՝

«Կատարող»	«Պատվիրատու»
"Ա.Բ.Պ." ՍՊԸ	
գործ. հասցե՝ ք. Երևան,Բաղրամյան 24բ	
ՀՎՀՀ 00862582	
Հ/հ 160480002445	
ՎՏԲ-Հայաստան բանկ	
տնօրեն՝ Հովհաննես Մարգարյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

Սույն հավելվածը հանդիսանում է # ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրի անբաժանելի մաս և առանց պայմանագրի չի հանդիսանում պաշտոնական փաստաթուղթ:

Ծառայության անվանում	Ծառայության արժեք
Ընդամենը	

«Կատարող» «Պատվիրատու»

"Ա.Բ.Պ." ՍՊԸ

գործ. հասցե՝ ք. Երևան,Բաղրամյան 24բ

ՀՎՀՀ 00862582

Հ/հ 160480002445

ՎՏԲ-Հայաստան բանկ

տնօրեն՝ Հովհաննես Մարգարյան

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ. Կ.Տ.